

ԵՐԱՆԻ՞ ՈՐ ՈՒՆԻՑԻ ԶԱՒԱԿ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

«Երանի՞ որ ունիցի զաւակ ի Սիոն»
(ԵՍԱՅԻ, ԼԱ 9)։

Եսայի մարգարեի այս խոսքին շատ բան կպարտին հայ ժողովուրդը և հայկական մշակույթը։

Քանի-քանի հայեր իրենց հոգևոր մխիթարությունը գտած են իրենց զավակները ընծայելով Նոր Սիոնին՝ Հայ Եկեղեցիին։

Որքա՜ն բարեպաշտ հայորդիներ, Սիոնին զավակ մը նվիրելու բախտեն զրկված ըլլալով, մխիթարություն ստացած են, փոխան զավկի՝ Աստվածաշունչ մը, Ավետարան մը, Շարական մը կամ Սաղմոսարան մը նվիրելով Հայ Եկեղեցիին։ Անոնք ջերմեռանդ իղձն ունեցած են այդպիսի բարեպաշտ զոհաբերություններով ստանալու թողություն մեղքերու և փրկություն հոգիներու։

Հայ Եկեղեցիի սպասին նվիրված հայ պատանիներն ու երիտասարդները դարեդար կենդանի պահած են հայուն հոգևոր կյանքը։ Հայ Եկեղեցիին նվիրված սրբազան մատյանները, ի գին իրենց մաշումին և փճացման, հոգևոր սնունդ մատակարարած են անհամար սերունդներու։

Հայաստանյայց Եկեղեցին, մեր նորաստեղծ Սիոնը, իր կեդրոնական կայքը ստացած է մեր հայրենիքի սիրտին իսկ վրա, ահա ատոր համար գրությանս վերնագիր դրի **Երանի՞ որ ունիցի զաւակ ի Հայաստան։** Հայ Եկեղեցիի կենդանության ջուրերը հոն է որ բխեցան, և անկե ծավալելով ողողեցին հայության անդաստանը, բերելու համար առատ արդյունք Աստուծո կալվածին մեջ։

Էջմիածին, Հայաստանյայց Մայր Եկեղեցին և Աթոռը Ընդհանրական Հայրապետության, լուսատու փարոսը հայ հոգիին, անմեռ հույսը և անառիկ բերդը հայուն հոգևոր անկախության։ Իր ծաղկումին մեջ զորավոր, զորավոր իր տառապանքին մեջ ալ, նման զայն կառուցող Լուսավոր Հոգիին։

Խոր Վիրապ, խոր ու խավար, ուրկե ծագեցավ լույսը Հայաստան աշխարհին։ Ուխտի գացեք հոն, եթե կուզեք սորվիլ թե ինչպես լույսը կհաղթե խավարին, եթե կուզեք ներշնչվիլ զորությամբը, որ մահով հաղթեց մահվան։

Օշակա՜ն, քանի՞ եկեղեցի կրնա պարծիլ իբրև հանգստավայրը Մաշտոցի նման հոյակապ հոգևորականի մը, որ իր հանճարով և տքնությամբ ձեռք բերավ ամբողջ ժողովուրդի մը հոգեկան և մտավոր լուսավորության գերազանց գործիքը։

Հայաստան, որ իր գրկին մեջ առած է անզուգական լեռը, Արարատը սուրբ, վրան բազմած խորհրդավոր Տապանը Նոյի, մարդկային ցեղի վերածնության փրկարար տապանակը։ Ապրիլ Հայաստանի մեջ և ողջունել Սուրբ Լերան լուսապսակ գագաթը, քանինե՞ր երազած են, և մեկնած այս աշխարհեն, առանց տեսնելու իրենց երազին իրականացումը։

Եվ ահա ատոնց Արագածը, Սուրբ Լեռ մը ևս ալ, վասնզի անոր վերև կպլպլա Հայության Լույսի Կանթեղը, պաշտպանված լուսապաշտ Արքայի մը անբեկանելի Սուրով։

Այս երկու Սուրբ Լեռներու միջև դաշտ մը բարեբեր, որուն օրհնված բարիքները սր-

նունդ կու տան Արմենական ցեղին, կզորացնեն զայն Հավատքի մեջ, կամրապնդեն անոր Հույսը, կծավալեն անոր Սերը: Այրարատյան բազմապտուղ դաշտը, ոռոգված հայ մշակի արդար քրտինքով, մշտընջենական օրրանն է գաղափարապաշտ հայ ժողովուրդին:

Հայուն քրտինքեն անբաժան է հայուն արցունքը. մայրական իր սերը սփռելով կհոսի Արաքսը, կբեղնավորե ընդերքը հայ հողին, որ անպակաս ըլլա արդար հացը քրիստոնյա հայու հյուրասեր սեղանեն:

Ահա այսպես է Հայաստանը, սուրբերու և սրբավայրերու երկիրը, նահատակներու և հերոսներու աշխարհը. երանի՜ որ ունիցի զաւակ ի Հայաստան:

Եվ տակավին ի՜նչ գանձեր կան թաղված հոն՝ ավերակներուն մեջ Հայոց հին մայրաքաղաքներուն՝ Արտաշատի, Վաղարշապատի և Դվինի: Հեռուեն եկող հովեր ձայներ կբերեն Անիեն, Կարսեն և Վանեն, անոնց հազար ու մեկ եկեղեցիներեն. այդ ձայնը լսելի են հայկական ականջներու միայն. Հայաստանի հողին վրա շնչողներ հոգևին կհասկնան այդ ձայներուն իմաստը: Երանի՜ այդ ականջներուն:

Քսան և ութ դարեր առաջ մարգարեն կձայներ. «Երանի՜ որ ունիցի զաւակ ի Սիոն». իր ձայնը երգ մըն է, երգ մը անմահական. հայացնենք այդ երգը Նոր Սիոնի մեջ, և կրկնենք սրտագին. «Երանի՜ որ ունիցի զաւակ ի Հայաստան»:

ՆՈՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՐՅԱՆ

(«Սիոն» ամսագիր, 1981, մայիս-հունիս, էջ 122)